Քաղվածք
ԵԴ2/3349/02/25

ՎՃԻՌ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

14.08.2025թ. **ք.Երևան**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

Նախագահությամբ դատավոր **Ռուբեն Բունիաթյանի**
Քարտուղարությամբ **Վարդուհի Թադևոսյանի**

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Սեյսմշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Շին Նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ նաև «Դելտա Սեքյուրիթի» ՍՊԸ) (հարկ վճարողի հաշվառման համար՝ 02886235, պետական գրանցման համար՝ 286.110.1302514, գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կենտրոն, Վարդանանց փողոց, շենք 18, բնակարան 2) ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (հարկ վճարողի հաշվառման համար՝ 02520926, պետական գրանցման համար՝ 286.005, գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կենտրոն, Արգիշտիի փողոց, շենք 1)՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին «Շին նախագիծ» ՍՊԸ-ին և «Սեյսմշին» ՍՊԸ-ին «գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից հանելու նպատակով գրավոր կարգով ՀՀ ֆինանսների նախարարությանը հայցվորների կողմից թիվ ՀՏՋՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ2024/5 ծածկագրով մրցույթի հայտի ապահովման գումարն ամբողջությամբ վճարած լինելու մասին տեղեկացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 362-րդ, 234.12-րդ, հոդվածներով՝ դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Սեյսմշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «Շին Նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին «Շին նախագիծ» ՍՊԸ-ին և «Սեյսմշին» ՍՊԸ-ին «գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ից հանելու նպատակով գրավոր կարգով ՀՀ ֆինանսների նախարարությանը հայցվորների կողմից թիվ ՀՏՋՀ-ՎՉԱՓ-ԽԲՄ-ԾՁԲ2024/5 ծածկագրով մրցույթի հայտի ապահովման գումարն

ամբողջությամբ վճարած լինելու մասին տեղեկացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի, այդ թվում՝ պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից մեկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by BUNIATYAN RUBEN 1312740051 **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

Ծանոթություն: Վճիռը մտել է օրինական ուժի մեջ «**_14_**» **_____օգոստոսի_____2025**թ.

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by BUNIATYAN RUBEN 1312740051 **Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**